

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին և Պոլսոյ հմր 8 Մէճ.
Վ. Գաւառայ 40 Մէճ.
Վ. Եղեմեանի 4 Մէճ.
Վ. Դաւառայ 5 Մէճ.
Եւրոպայի թերթի գին 60 փրկ.
Դանձուցման տողը մէկ անգամի հա-
ւար 3 դուրուշ, երկու անգամի հա-
ւար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար զատ աւելարկութիւն կը լինայ:



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՔ

Կուրս զաջած լրագրաց ճանաչու-
նալիքը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ օրիւն իցէ գրութիւն խմբագրի
հասցէին պիտի ուղղուի, և Պո-
լսոյ Գինիի խան, Մարտի գրասեն-
տի մը:
Ճամբու ծախքը չվճարուած չա-
նակ չընդունուիր:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 29 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Պ. ՊՐԻՍԻ ԱՏԵՆԱՐԱՆԹԻԻՆԸ

Անգղիոյ խորհրդարանին մէջ առ-
կէց քանի մը շաբաթ առաջ թուր-
քիոյ վրայ բացուած ծանր վիճաբա-
նութիւնը կը յիշեն ընթերցողք: Անգ-
ղիոյ լրագիրք այս առթիւ խօսուած
ատենարանութեանց ամենէն կարե-
ւորները խիստ համառօտ և թերի
կերպիւ հրատարակած էին, գլխաւո-
րապէս Պ. Պրիսի ատենարանութիւնն
որ վիճաբանութեան հոգին իւր մէջ
կը բովանդակէր:

Սակայն մայրաքաղաքի Անգղի-
ական Լէվընթ Հէրբըր լրագիրք Պ.
Պրիսի ատենարանութեան ամբողջ
պատճենը ձեռք բերած և իւր ուր-
բաթ առաջ թուոյն մէջ հրատարա-
կած ըլլալով արժան կը համարինք
մեք ալ ամբողջապէս թարգմանել
տեղեկութիւն մեր արդոյ ընթերցո-
ղաց:

«Տեւրք»

«Մեծ ուշադրութեամբ մտիկ ը-
րի այսօր խօսուած ատենարանու-
թիւնները, բայց չկրցի նոցա ճիշդ-
իմաստն ըմբռնել:

«Պէտք է արդեօք հասկնալ թէ
Ժողովը թուրքիոյ կառավարութեան
վրայ խնամակարի պաշտօն վարել կու-
ղէ: Չեմ կրնար հաւատալ թէ իւր
օրինաւոր դերն ըլլայ այդ և առ-
կայն խօսուած ատենարանութեանց
մեծ մասին դիտումն այդ է: Ծառ կը
ցաւիմ այն դիտողութեանց վրայ զորս
Պ. Եօրք ըրաւ անկախ վեհապետի մը
կենսավարական սովորութեանց վրայ:
Հասկնալի երեսփոխանին անշուշտ
իւր դուրսի ժամերուն մէջ գրած
գրաբանութիւնները բնաւ իրաւունք
չունենին այս Ժողովոյ առջև ներկա-
յանալու, և պէտք չէր ներկայանա-
լին: Կը ցաւիմ նոյնպէս թուրքիոյ
նախարարաց դէմ եղած դիտողու-
թեանց և միանգամայն խիստ յաջո-
ղակ թուրք քաղաքագէտի մը նը-
կատմամբ եղած բացատրիկ գովու-
թեանց եղանակին վրայ: Իմ կարծիքս
այս է թէ Անգղիա պէտք չէ բնաւ
նախամեծարութիւն ցոյց տայ որ և
է նախարարի մը, թէ և մեր խօսքին
նիւթ եղող նախարարին չափ հանճա-
րեղ ըլլայ երօք: Ես թուրքիոյ նա-
խարարաց նկատմամբ ընդհանրապէս
եղած քննադատութեանց բնաւ հա-
մամտ չեմ: Ես անոնցմէ շատերուն
հետ մտերմաբար տեսակցելու առիթ
ունեցած ըլլալով խիստ հանճարեղ
անձինք տեսած եմ անոնց մէջ, որք
անկեղծ անձնութիւն մ'ունին
իրենց երկրին շահերուն, և չեմ կր-
նար երբէք հաւատալ թէ թուրքիոյ

պետական մարդոց հայրենասիրու-
թիւնն ու տաղանդն Արի փառայի
գերեզմանին մէջ թաղուած ըլլայ: Ես
կրնամ խոստովանել թէ թուրքիոյ մէջ
վարչական մեծ անկարգութիւն կը
տիրէ: Բայց պէտք է յիշել, որ այս
մասին ճիշդ տեղեկութիւններ ստա-
նալ խիստ դժուարին է, որովհետեւ
ոչ հրապարակային վիճաբանութիւն
կայ երկրին մէջ, ոչ ալ իրապէս ան-
կախ մամուլ: Կառավարող դասերն,
որք միայն ընդհանուր ծանօթութիւն
մ'ունին եղածներուն, օտարականաց
հետ խառնուելու սովորութիւն չու-
նին, և զարմանալի կերպիւ խորհրդ-
ապաւ հեն: Հետեւաբար օտարազգի
այցելուք, տեղեկութեան լուրջ ազ-
բիրներ չունենալով, խիստ թերի
կամ սխալ տեղեկութիւն ունեցող
կամ շատ անգամ անձնական շահուց
կամ նախապաշարմանց համեմատ խօ-
սող մարդոց շաղկիւրատանքը լսելու
հարկին մէջ կը գտնուին: Այդ շա-
ղկիւրատանքը կը կրկնուին մեզ, և
մեք զանոնք հերքելու միջոցներ
չունինք, թէ և բնաւ խիլ արժէք
չունենան:

«Թուրքիոյ կառավարութեան տ-
մենէն մեծ գեղարդութիւնն իւր
տկարութեան մէջ է, որոյ գլխաւոր
պատճառն է օտարազգեաց բացա-
ռիկ դիրքը, զոր անտարակոյս եմ
որ այս Ժողովը չհասկնար, որովհե-
տեւ ոչ մի քաղաքակրթեալ երկրի
մէջ օրինակը չկայ: Թուրքիոյ մէջ
կարեւորական անշուշտութիւն
գրեթէ բնաւ չկայ: Իսկ վաճառա-
կաններն, որք ուրիշ երկրներու
մէջ միջին դասը կը կազմեն, գրեթէ
ամենն ալ օտար պաշտպանութեան
ներքեւ են, և հետեւաբար երկրին
երմտական ու դատաստանական իրա-
ւասութիւնէն անկախ: Ըսել է թէ բնիկ-
ներուն կողմէ բնաւ հակադրութիւն կամ
քննաթիւն չկայ երկրին կառավա-
րական վարչութեան մէջ, որոյ դու-
րը մի միայն Ժողովրդեան ստորին
դասերուն հետ է, և անոնք ալ
զեղծմանց դէմ կենալու կամ տե-
ղական պաշտօնաւորներն յոյժ-իմո-
նելու բնաւ միջոց չունին: Ժողովը
կրնայ հասկնալ թէ վարչութեան մը
դուրեւրուն հակադրութիւնը կամ քն-
նութիւնն ո՞րչափ դժուար և անզօր
է մինչև իսկ լաւ կառավարեալ եր-
կրներու մէջ, երբոր նորա իշխա-
նութեան ներքեւ գտնուողները զեղծ-
մանց դէմ ելնելու բնաւ միջոց չու-
նին: Ասոր հակառակ, օտարազգիք
խել մը յատուկ պաշտօնաւորներ
ունին իրենց վրայ իրաւասութիւն
բանեցող, և կատարելապէս ան-
կախ են երկրին իշխանութիւններէն:
Բերքի — Զըքի երեսփոխանը 16 կամ
17 հիւ պատուութիւն յիշեց, որք ի-
րաւասութիւն կը դրոժման և Պոլսոյ
մէջ Նայը կը տեսնուի նաեւ մեծ քա-
ղաքացի շատին մէջ, և հիւպատոսնե-

րէն քառ թարգմաններ ալ կան, ո-
րոց միջոցաւ կը հաղորդակցին օտա-
րազգիք տեղական իշխանութեանց
հետ: Կան անշուշտ պարկեշտ թարգ-
մաններ, բայց օմանք նախատինք են
Արեւելից և սակայն եթէ դատուաց
կառավարիչներէն մին այդ պարոն-
ներէն մին վշտացնէ, գործը և Պո-
լսոյ կը դուրի դեպքանին, նա ալ իւր
ազգեցութիւնն ու օգտակարութիւ-
թիւնը ցոյց տալու համար Գրան կը
գանջ տաի և կառավարիչն հաւանա-
կանաբար Կ. Պոլսոյ կը կոչուի, թէ
և իւր պարտականութիւնը խոճիւ-
կատարած ըլլայ: Ծառ անգամ և
գրեթէ սովորաբար լաւ կառավա-
րիչներն են որ այդ անձինքը վշտա-
ցնելու կամ ուսանց շահը նուազե-
ցնելու առթիւ մէջ կը գտնուին: Ինչ-
պէս հնար է որ թուրքիոյ կառավա-
րութիւնն յարգուի, և իւր լաւա-
գոյն դիտաւորութիւններն յաջող
վարի մանի հասնին, քանի որ միջին
դաս մը չկայ իւր իրաւասութեան
ներքեւ, որ կարող կամ փափաքող
ըլլայ քննադատութեան, և քանի
որ իւր ամենէն բարձր պաշտօնա-
ւորներն ամեն վայրկեան հակառա-
կող ունին իրենց դէմ օտարազգի
փոքրիկ իշխանութիւն մը, ոչ թէ
երկրին այլ իւր սեփական շահուն
համար: Անգղիոյ դեռ պահանջ թու-
րութեան վրայ շատ գանգատներ ե-
ղած են, բայց ես դժե եմ որ այդ
փութալանութիւնը չեն ցուցներ:

Միջոցաւ յաջորդ Բոսնի

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Աթէնք 5 օգոստ.

Ծովային գործոց նախարարն հրաժա-
րական տուաւ:

Լրացիր Ժամայինութեամբ կը գո-
վեն վերջին ընտրութեանց մէջ կառա-
վարութեան բաժած վարմունքը:

Հիւսիսեւ աստատմաց ի նպատակ նոր
ցոյց մ'ըլլաւ զորցը Բոսնիոյ սուա է:

Տըպլին 6 օգոստ.

Օրօնիկ հարկաւորաց աստեղարմին
տօնն երկի սկսաւ: Սու տօնին ներկայ
դտնուելու համար Իրանուայի ամեն կող-
մերէն տնթիւ բազմութիւն եկան, բայց
անկարգութիւն մը չարտահայտու:

Լոնտոն 6 օգոստ.

Լոնտոնի Պ. Պ. Մօրիան և Բիլի և
Փարիզի Պ. Պ. Տօնիլ և Բիլի կը ծանու-
ցանեն թէ Նիւ-Իօրքի Պ. Պ. Տըքան
Շէրման և ընկերութեան հանած չըջա-
բերական հաշուեցոյցները կամ փոխա-
նակադրերը մինչև յաւաքիկայ 31 հոկ-
տեմբեր պատրաստ են իրենց ներկայ-
ցընողներուն վճարել:

Պերլին 6 օգոստ.

Պաշտօնապէս սուտ կը հանուի այն
լուրը թէ Պապին նուիրակն և Վիեննայի
գերմանական դեսպանը Գերմանիոյ և
պիսկոպոսաց և կառավարութեան մէջ Է-
րաւասութիւն մը գոյացնելու փորձ
կընեն:

Բեդրաստի 7 օգոստ.

Խօքանուն և կամ լուրերը կը ծա-
նուցանեն թէ խանութեան մայրաքա-
ղաքին մէջ աստատմութիւն մը ծաղեր
է, և թէ աստատմը խանը վնասներ են
իւր ընտանեաց հետ:

Աթէնք 7 օգոստ.

Երեսփոխանական լուծեալ Ժողովին
մէջ Պաշտօնի նախարարութիւնը պաշտօ-
պանող երեսփոխաններէն տասնեկնիցի
չափը միայն կրցին վերընտրուիլ, Պ.
Պաշտօնի և Պ. Կրիվան ալ այս թուոյն
մէջ ըլլալով: Իսկ Պաշտօնի նախարա-
րութեան միւս անդամները չկրցին քու-
շտիլ: Այս արդիւնքը վերջին նախա-
րարութեան անդամաց հակասականազ-
րական ընթացքին դէմ երկրին դժգո-
հութեան յայտնի ապացոյց մը կը համար-
ուի:

Աթէնք 8 օգոստ.

Յունաստանի երեսփոխանական ընտ-
րութեանց մէջ ընդգիմադրի մասերն
ստուար մեծ ատանութիւն ձեռք բե-
րին: Քուստուտուրոսի կուսակցութիւնն
ամենէն շատ երեսփոխաններ ունի. ան-
կէ ետքը կուղաց Տէրեօրիկի կուսակցու-
թիւնն, և յետոյ կառավարութեան կու-
սակցութիւնը: Իսկ Պաշտօնի կուսակ-
ցութիւնն ամեն անգամ փոքրամասնութիւն
մ'ունեցաւ:

Լոնտոն 6 օգոստ.

Սուր	Քուստ.	40	3/46
Իսկ	1863	66	4/2—67
»	1869	53	3/8
»	1874	64	
»	1872	78	7/8
»	1873	54	4/46

Անգղ. Քուստ. 94 74/6

Իվիլբուր 7 օգոստ.

Բաւարացի Միալիկ—Օրթէան 7 1/2
» Զայր Տօլեբաճ 4 7/8—5
Ծովաւոր 12000 հակ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիլի Կուստի Ժամայինութեան Եր-
եսփոխանները և Երեսփոխանները:

Յօդ. 1. Միւսագափաթ (վրան շէնք
ունեցող) և Միւսագափաթ (վրան
շէնք չունեցող) վագֆ կալուածները
կը ժառանգեն:

Ա. Սրու և Է. Երդիք հաւասարա-
պէս, կամ բնականաբար միակ օրդին
արու կամ էգ:

Բ. Թոռներն, եթէ կալուածատիրոջ
որդիքը մեռած ըլլան և զաւակ ու-
նենան:

Գ. Հայրն ու մայրն:

Դ. Համահայր և համամայր եղբարք:

Ե. Համահայր եղբարք:

Զ. Համամայր եղբարք:

Է. Կենդանի մնացող այրը կամ կինը:

Յօդ. 2. Վերջինիցեալ եօթն աստիճա-
նի ժառանգներէն նախադաս աստի-
ճանի ժառանգը կենդանի եղած ժա-
մանակ, յաջորդ աստիճանի ժառանգ-
ներն իրաւունք չեն կրնար ունենալ
ժառանգութեան. օրինակի համար
որդին կամ որդիքն ողջ եղած ժա-

մանակ թուանքը չեն կրնար ժառանգել. թուր կամ թուանքը կեցած ժամանակ մեռնողին ծնողքը չեն կրնար ժառանգել. ծնողքը կեցած ժամանակ եղբարքը չեն կրնար ժառանգել և այսպէս յաջորդաբար մինչև կենդանի մնացող այրը կամ կինը. եթէ այս վերջիններն ալ կենդանի չըլլան, վաղֆին (Մահիլիւ) կը մնայ ժառանգութիւնը:

Յօդ. 3. Պարտուց երաշխաւորութեան համար վաղֆ կալուածներ գրաւել զենելու՝ այսինքն իբրև աւանդ ուրիշ վրայ դարձնելու սովորութիւնը պիտի պահուի. բայց ասոր պայմաններն ու ձևերն որոշելու համար յատուկ կանոններ պիտի շինուին:

Յօդ. 4. Ժառանգական իրաւանց այսպէս ընդարձակուելէն վաղֆին կրած քննաւոր փոխարինութիւն մը ըլլալու համար, վաղֆին վճարուած տարեկան վարձը (իճարէ) 1000 ին 4 պիտի ըլլայ Միւսադաֆաթ և Միւսթէղէլթի կալուածոց համար, նոր արձանագրութեանց մէջ նշանակեալ արժողութեանց համեմատ:

Յօդ. 5. Առաջին աստիճանի ժառանգաց վրայ դառնալու ծախքն ըստ առաջինի հազարին 15 է. երկրորդ աստիճանի ժառանգաց վրայ դառնալու ծախքը 1000ին 30. երրորդ աստիճանին 1000 ին 40. և յաջորդ աստիճաններունը 1000 ին 50: Իսկ վաճառման առթիւ վճարուելիք դարձունդէն ըստ առաջինոյն 1000ին 30, և գրաւի քենելու և ոգտակելու ծախքը 1000ին 5 է:

Յօդ. 6. Առաջին աստիճանի ժառանգներէն առնուած դարձունդէն մէկ չորրորդն ըստ առաջինի է. վաղֆի գրաւիքներուն ու ճապիներուն պիտի արուի. իսկ միւս աստիճանաց ժառանգներէն առնուած դարձունդէն միւսը յաւանդեալ տէրութեան գանձուն պիտի յանձնուի:

Յօդ. 7. Կէտիքներն ալ վերոյիշեալ պայմաններուն ու կանոնաց ենթակայ պիտի ըլլան:

Յօդ. 8. Կալուածոց մը վարձը (իճարէ) վերջինեւ ձեռք որոշուելէ ետեւ, այրած կամ անընտելի եղած վաղֆ չենքերն ու կալուածները գետնին արժողութեանը համեմատ տարեկան վարձ (իճարէ) պիտի վճարեն:

Յօդ. 9. Հրկիզեալ կամ անշէն վաղֆ գետններու վրայ շինուած նոր շէնքերը նորէն գնահատուելով ըստ այնմ տարեկան վարձու (իճարէ) պիտի ենթարկին:

Յօդ. 10. Ամէն հինգ տարին անգամ մը վաղֆ կալուածները նորէն պիտի արձանագրուին, և անոնց արժէքին աւելնալուն կամ պակսելուն համեմատ տարեկան վարձն ալ պիտի աւելնայ կամ պակսի:

Յօդ. 11. Այս նոր դրութեան համեմատ նոր կալուածագրեր պիտի տրուին կալուածատեարց: Հին կալուածագրերն ալ նմանապէս կալուածատեարց պիտի յանձնուին, վրային ունեւորութեան (պաթա) դրոշմ դարձնուելով:

Յօդ. 12. Այն Միւսադաֆաթ և Միւսթէղէլթի կալուածներն, որոց գետնները վարձահատեալ (մեղաթալը) վաղֆ են, և որոց վրայ Միւսթէղէլթի և տունկեր կը գտնուին, հին կանոնաց ենթարկեալ պիտի մնան:

Յօդ. 13. Միւսադաֆաթ և Միւսթէղէլթի կալուածոց ժառանգութեան իրաւունքն ընդարձակուելու նշանակուած 1284 Մուհարրէմ 17ին (1867 մայիս 21) հրատարակեալ օրէն:

ըն, ինչպէս նաեւ այն օրինաց դարձագրութեան համար 1285 Ջիքատէ 2ին հրատարակեալ կանոնադրութիւնը խախտուելով, անոնց տեղ այն կանոնադրութիւնը պիտի գործադրի հրատարակութեան օրէն սկսեալ: Հին վարձերն (իճարէ) 1290 փետր. վերջէն ետեւ կը դադարին վճարուելէ: Իսկ ներկայ կանոնադրութեան համեմատ որոշուելիք տարեկան վարձերն 1291 մարտ 1էն (1875 մարտ 1) սկսեալ պիտի վճարուին:

Վեհ. Ստեփաննի ճարտարապետ Վեհմ. Սարգիս պէյ Պալեան, որուն յանձնուած է Պաղատաի երկաթուղւոյն շինութիւնը, երէկ առաւօտ իջ միտ գնաց քանի մ'երկրաշարժներու հետ, որպէս զի նախ իջմիտէն մինչև Էնկիլըրի շինութիւնը երկաթուղւոյ բաժնին համար պէտք եղած ծրարագիրը պատրաստելով Վեհ. Ստեփաննի ներկայացնէ:

Մանասթըրի բնակիչները տեղական իշխանութեանց դէմ դառն գանգատներ ժառուցած ըլլալով Բ. Դրան, Բարձր. Մեծ Եպարքոսն յատուկ քննիչ մը զրկել որոշեց:

Ստանայի մէջ մահաբեր հիւանդութիւն մ'երեւան ելած ըլլալով, Գառնի թիւայի տեսչութիւնն ինչեալ հիւանդութեան ինչ ըլլալն ստուգելու և ծաւալման առաջին տանու համար հարկ եղած միջոցները տնօրինելու առժամանակեայ պաշտօնը Ստեփաննի Գառնի թիւայի տեսչ. Մեծ. Տրքմար Գ. Մարգարէն Էֆէնտիքն յանձնեց, որ փողը ճանաչող պիտի ելնէ մայրաքաղաքէս:

Չորս ջրանկիր, երկուքը հայ և երկուքը յոյ, անցեալ չորեքշաբթի իրիկուն Բերայի Տօրապօլէսէ թաղը գինետան մը մէջ ի միասին արքանալէ ետեւ, յանկարծ մէջերնին կռիւ մը ծագելով՝ իրարու վրայ կը յարձակին, և զիրար գանակներով կը հարուածեն: Երբոր աստիճանութիւնը կը հասնի, կռուողներուն երեքը մէկ հայ և երկու յոյ՝ չարաչար միմեքորուած կը գտնեն, իսկ չորրորդը՝ Միւսադաֆաթի վրէժը կը պահէ:

Թարապիսի առջև սպասող Անգղիոյ դեսպանական Անթիօք շոգեւն ինն տեսչութիւններէն երկուսորդանոց զիսկ մ'անցեալ շաբթու Պեօթի քաղաքէն մէջ ծանրապէս գինովեցած ըլլալով, տեղւոյն ստիկանութեան հաշտարարներու երկու զինուորացի կը յանձնէ զայն որ Թարապիս տանին: Սակայն ինչեալ զինուորները ճանաչան բռնութիւն կրնան պատահել:

Այս բանն Անգղիոյ դեսպանին իմանալով՝ Բ. Դրան գանգատեցաւ և ինչեալ զինուորաց պատմութիւնը պահանջեց:

Կրտսէ թէ կայսերական կառավարութիւնն օրինաց տրամադրած պատժոյն մեծագոյն տուածներ պիտի գործադրեն ինչեալ զինուորաց վրայ՝ յօրինակ ալոց:

ԱՌՍԱՆԻՆԵՐԹԻՒՆ

ԵՍՆՍԻՆԵՐԹԻՒՆ

28 յուլիս	Երկուշաբթի իրիկուն	41 36
29 յուլիս	Երեքշաբթի աստուտ	
	Բացող երես	44 38
	Կէս օր	44 34

Կ. Պոլիս 28 յուլիս

Սեպտեմբ. 1	Հրկիզեալ և անշէն վաղֆի վրայ	7, 7
2	Փոխանակութեան	8, 3
3	Պարտուց ժառանգութեան	6, 7

Քրտալի Ժէնէրալ	9, 32
Քրտալի Պալատ	423 3/4
Քրտալի Ժէնէրալ	339
Քրտալի Ժէնէրալ	340
Քրտալի Ժէնէրալ	274
Քրտալի Ժէնէրալ	34
Քրտալի Ժէնէրալ	263
Քրտալի Ժէնէրալ	3, 30

Քրտալի Ժէնէրալ	410 32
Քրտալի Ժէնէրալ	88 6
Քրտալի Ժէնէրալ	90
Քրտալի Ժէնէրալ	51 30
Քրտալի Ժէնէրալ	405 42
Քրտալի Ժէնէրալ	431 40

Քրտալի Ժէնէրալ	40 5/16
Քրտալի Ժէնէրալ	66 4/2—67
Քրտալի Ժէնէրալ	53 7/8
Քրտալի Ժէնէրալ	64
Քրտալի Ժէնէրալ	78 7/8
Քրտալի Ժէնէրալ	34
Քրտալի Ժէնէրալ	94 7/16

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի.

ՀՐԱՒԵՐ ԱՌ. Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. ԵՐԵՎԱՆԻ

Այդպիսի ժողովը նիստ ունի յառաջիկայ ուրբաթ օգոստոս 1, ի Ղալաթի:

Ստեփաննի պիտի բացուի ճիշդ ժամ 6ին և գոցուի 10ին:

Հրաւիրեալ են Երեւանի տեղական ֆէնտիներն՝ իրենց ազգասիրական պարտականութիւնը կատարելու փութով:

26 յուլիս 1875
Ի Պատրիարքարան հայոց
Կ. Պոլիս

ՊԱՏՐԻԱՐԿ Կ. ՊԱՏՐԻԱՐԿ
ՆԵՐՍԵՍ ԱՐԿԵՊԵՍԿՈՍ

ՕՐԱՄԱՐԳ

Վերաքննութիւն Սահմանադրութեան. — Երկրորդ ընթերցում առաջարկեալ փոփոխելի արդարութեանց. — Վիճաբանութիւն Ա. յօդուածայ վրայ, որ պարունակէ կեդրոնական վարչական մարմնի ժողովոց, խորհրդոց և հոգաբարձութեանց կազմակերպութեան վերաբերեալ փոփոխութիւնը:

Ատենադպիր
Հ. Ս. Արմենի

ՊԱՏՐԻԱՐԿԱՅԻՆ ԻՇԽԱՆԻԹԻԻՆ

Հայ ժողովուրդը մեծ մասամբ տակաւին այս համոզման մէջ է թէ Պատրիարքն ազգային գործոց մէջ իշխանական հեղինակութիւն կամ ազդեցութիւն ունի, և ինչ որ ուզէ կրնայ ընել: Այս համոզման սրճափ սխալ և անհիմն ըլլալը բացատրելու հարկ չկայ: Սահմանադրութեան տեսլակը ձեռքն առնողն իսկոյն կը հասկնայ թէ Պատրիարքին վրայ իշխանութեան ստուերն անգամ մնացած չէ, այնպէս որ մինչև իսկ նկեղեցւոյն տուած արքեպիսկոպոսական և առաջնորդական իրաւասութիւնը ձեռքէն առնուած և ժողովներու յանձնուած է:

Պատրիարքն ուրիշ բան չէ այս օրուան օրս՝ բայց միւսն ժողովոց որոշման գործադիր մը, և սակայն պատասխանատու ազգին և տէրութեան առջև. պատասխանատու՝ երբոր ժողովոց որոշմանը դարձագրէ, որովհետեւ եթէ այն որոշմանը սխալ կամ պակասաւոր են, թէ՛ ազգին և թէ՛ տէրութեանը Պատրիարքը կը մեղադրեն. եթէ չգործադրէ, դարձեալ պատասխանատու է, որովհետեւ Սահմանադրութիւնը ճշգրիտ և հստակաբար թելադրէ:

Ժողովուրդն ու ընտրած ըլլալով, հարկաւ չկրնար իւր ուխտին դէմ գործել՝ առանց ուխտադրուած համարուելու:

Ս. Պատրիարքին այս չափազանց պարտանդեալ վիճակն՝ որ իւր գրիցն և պատասխանատուութեան հետ չկրնար համաձայնիլ, և ըստ մեր կարծեաց չափաւորուելու պէտք ունի, ազգին տիրող օրինաց պահանջովն ըլլալով, ժողովոց որոշմանց համակերպելուն և զանոնք ընդունելով գործադրելուն համար իրաւունք չունինք զինքը մեղադրելու. եթէ մեղադրելու մէկը կայ, օրէնքը միայն կրնայ ըլլալ որ այդ վիճակին մէջ գրած է Ս. Պատրիարքը. հետեւաբար կը ցուինք որ 15 և 28 անգամներէ բաղկացեալ ժողովոց մեծամասնութեամբ տուած որոշմանց համար Ս. Պատրիարքն և անոր հետ երբեմն ալ ժողովին ատենապետը միայն տարապարտուց կը բաժնաւորեն՝ առանց նկատուելու թէ Պատրիարք կամ ատենապետ մէկ 14 ըր կամ 28 ըր ձայն ունին վարչական ժողովոց մէջ, և թէ այդ միակ ձայնը որ կրնայ երբեմն տարակարծիք իսկ դանուիլ պատասխանատու բռնելը արամարանական ամեն օրինաց հակառակ է:

Մեր այս խորհրդածութեան հաստատութիւն կուտայ լոյս պարզեցական իր հետեւեալ տողերով, որոցմէ ալ բացայայտ կը տեսնուի թէ առանց Պատրիարքին իրաւասութեան սահմանն ընդարձակելու՝ վարչական ժողովոց որոշմանց պատասխանատուութիւնն անոր վրայ ձգել և զայն մեղադրելն յայտնի անիրաւութիւն է:

«Եւ քանի օրէ ի վեր թէ ուղղակի և թէ անուղղակի հրապարակային ակնարկութիւններ կը ըլլան Սրբազան Պատրիարքին պաշտօնին դէմ, որպէս թէ Նորին Սրբազնութիւնն Արժ. Ամբրոսիոս վարդապետը Պալքէսէր զրկած է և թէ վանեցի Արժ. Պողոս վարդապետը արդարացուցած է: Այս տեսակ անտեղի ակնարկութիւններէ յառաջ պէտք էր փնտռել թէ ինչ է Ս. Պատրիարքին պաշտօնն ու պարտականութիւնն, և թէ այդ անդրոց մէջ ուրիշ ինչ ընթացք կըրնար բռնել Ազգային Սահմանադրութիւնը Սրբազան Պատրիարքին սահման յուշած է Ազգային ժողովոց նախագահել և անոնց որոշումները գործադրել. արդ՝ այս անձուկ սահմանին մէջ ինչ իրաւունք ունինք ուրիշ օրէնքներ և պաշտօններ պահանջել Նորին Սրբազնութեանէն:

Ամեն օր խղճիւ կ'իվայէ որ Սրբազան Պատրիարք Հայրն իր դահալալէն ի վեր աշխարհի բռնած և տիրապետ ընթացած է, զոր Սահմանադրութիւնն իր առջև դրած է: Այս բնաւ յանցանք կամ դատապարտութիւն չէ Նորին Սրբազնութեան համար:

Եւ քանի ժամանակ իրաւունք կունենանք մեծ բաներ սպասել Պատրիարքութեանէն և զայն ըստ ամենայնի պատասխանատու ճանաչել, երբ սահմանադրութիւնն անոր իշխանութիւնը կը դադարեցնէ, երբ զօրութիւն և ոյժ կուտայ անոր՝ Ազգային ժողովոց մեծամասնութեամբ որոշած խնդիրներուն դէմ թէ հարկն պահանջէ՝ բողոքել, զանոնք դիտողութեան առնուել և կրկին քննութեան ու վերաքննութեան ենթարկել. քանի որ այսօր Ազգին ընդունած օրինացը մէջ այս ուստի արտօնութիւն և իրաւասութիւն չէ տրուած, և քանի որ Պատրիարքն ալ իր պաշտօնն ներկայ օրինաց համա-

ձայն կ'ընկերէր, և հետեւեալ արտաբերէր՝ « Եւ իցէ ինքն ինքն մէջ Սրբազան Պատրիարքին պաշտօնին գէժ'ն և իցէ սկնարկութիւնք և առարկութիւնք անտեղի և անհեծեթ են »:

Աղբալի վարդապետ խառն ժողովն մեծամասնութեամբ որոշած է Արժ. Ամբրոսիոս վարդապետ Պալը քննել երթալու. նոյնպէս ալ վերջին օրերու մեծամասնութեամբ արդարացուցած է երկար ժամանակէ ի վեր ամբաստանութեան տակ գտնուող վանեցի Արժ. Պօղոս վարդապետը և Ս. Պատրիարք Հայրն ալ այդ որոշումներն յարգած ու վաւերացուցած է և:

ՄԱՍՆԱՍՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Ի վերջ հանգստեալ Ներսէս 5 րդէ Կոստանդնուպոլսէ Հայոց, պարտաւոր յաւանդեալ ինքն ինքն, որ ինչ որ հարկաւոր է Պարսից պարսկերէն ժամանակ:

(Ծր. Դեմ. Բեմ. 1744)

Ձկնի քանի մի ամսոյ լուեալ եղեւ թէ կայսեր եղբայր Միխայէլն ունի գալ ի Քիւնի գէպ ի Պ. Բուրգ: Ներսէս մեծ յոյս ունէր գտնել զսառնակները, բայց այս անկախութիւնն ևս չկատարեցաւ, որովհետեւ մայր նորա հիւանդ դուրս գալու չէր շտապել հասնել, վասնորոյ կուրիէրով մտեալ ի Քիւնի նոյն խկ ժամանակ երեւալ էր անտի: Ձկնի փոքր միջոցին ինքն կայսրն վերադարձաւ ի պատերազմէն ծովաւ յՕտէսայ և անտի ի Պ. Բուրգ: Յետ այնորիկ Ղինիսայ Ատիւտանդ Գրաֆ Դիւրիչն վերադարձեալ ի պատերազմէն եկն ի Քիւնի և ի վերջ անցաւ մերձ ի բնակարանն՝ ուր նշտեալ Ներսէս: Թէպէտ սա ևս չտաւ պէր գնալ, բայց լսելով թէ՛ Ներսէսն երեւալ է ի Քիւնի և կամի տեսութիւն նորա, ասել էր Դիւրիչն, « Թէպէտ ժամանակս չէր ներում, բայց հարկ է ընդունիլ զպատիւն Հայաստանի » և նշանակեալ էր տեսութիւն միւս օրն յառաւօտեան՝ ըզկնի վերադննելոյ նորա զգորս և հիւանդանոցն՝ հրամայեալ էր բոլոր ծառայողաց ներկայանալ ի նշանակեալ ժամանակ:

Դիւրիչն վերադարձեալ ի գննութենէն, բոլոր մեծամեծք և աստիճանաւորք և Քիւնի այ մտաւորացիս Գաբրիէլն ժողովեալ ի գահին ըստ պատեն գալտեան Դիւրիչն. բայց Ներսէսն, որպէս նշանակեալ կար ժամանակն դարտեան, պատեալ նշանակեալ ժամանակ, և ի լրանալն ժամանակին երեւալ Լազարէն ի բնակարանէն Դիւրիչն և առեալ զՆերսէսն գնաց ի յօթեան նորա: Ի մտանքն Ներսիսի ի գահին թողեալ Դիւրիչն զբոլոր բազմականսն՝ ընդ յառաջ շտապեաց մինչ ցրտուն և ընկալեալ սկսաւ համբարել, և երկոքին ի միասին մտին ի գահին, ուր նստուցեալ սկսաւ հարցանել նախ զառողջութենէն և ապա զճանապարհորդութենէն: Մինչև ցայն ժամանակ ոչ ըզք ճանաչէր զՆերսէս գոյ երեւելն անձն. երբ տեսին այսպիսի անակընկալ ընդունելութիւնն Դիւրիչն՝ բոլորեքեանք զարմացան և հարօտանային ծանօթանալ զճետ նորա, նաև և մտաւորացիսն Ռուսաց: Դիւրիչն և Ներսէսն յետ երկար խօսակցութեանց միմիանց հետ ասաց առաջինն թէ՛ ևս գնամ առ կայսրն ի թէ ունիք յանձնարարութիւն, ևս հասուցից նմա: Պատասխանեալ Ներսէսն թէ՛ ցանկալով ցանկալի տեսանել զկայսրն բայց ոչ արժանա

ցայ, այսու ամենայնիւ ձեզ տեսի, բոլորն մի է թէ զկայսրն տեսի: Առեալ Դիւրիչն համբարեաց զայն Ներսիսի և մտին յառանձին սենեակն խօսեցան անդ մի քառորդ ժամ, ապա՝ երեւալ անտի բարեեցին և Դիւրիչն իսկոյն ճանապարհորդեցաւ գէպ ի Ս. Պետրոսի գլխին յանձնելով Ներսիսին գրել նմա յամենայն կարօտութենէն իւրմէ առ ի յայտնելոյ կայսրն:

Ձկնի գնալոյ Դիւրիչին ի Քիւնիաց (Դիւրիչն էր Նշապիկի կայսերն շտամբի և զինուորական նախարար), երեւելիք տեղոյս և մտաւորացիսն Ռուսաց սկսան միշտ երթ և եկն թիւն ունեանալ, մինչ զի իմացեալ գլխաւոր նախագահութիւն Գրաֆ վօրօնցովի թէ սա այն Ներսէսն է, որ ի լինելն իւր 1800 ամի Ատիւտանդ Կնեալ ճիցիանովի տեսեալ է Գանձակ քաղաքում և ծանօթ ընդ նմա, որպէս ինքն Ներսէսն պատմէր, թէ « Յովհաննէս եպիսկոպոս Հայոց գնացեալ ի տեսութիւն կուսակալին վրաստանու ճիցիանովի ի Գանձակ 1803 ամի, ես ևս գոյով ընդ նմա իսկ վօրօնցովն էր Պօրուչիկ: Ի ժամ տեսութեան կուսակալին ոչ գոյր թորգման, ես ինքս գիտեմեալով քանի մի բառ Ռուսաց, խօսելի տեղ վօրօնցովն ծանօթացեալ ընդ իս ասել էր, ամեն չէ՛, որ ի ձեռն ոչ մինն չգիտէ խօսիլ Ռուսերէն, վասնորոյ պարտաւորեմ զձեզ հետեւիլ և ուսանիլ խօսելն Ռուսերէն: Յետ այնորիկ Ներսէսն սկսեալ էր ուսանիլ, մինչ զի յառաջին տեսութիւն նորա զճետ վօրօնցովին ի Քիւնի ասել էր սա Ներսիսին թէ՛ « Պատճառ խօսալոյ քոյ Ռուս լեզուաւ ես եմ »: Ապա սկսեցին սերտ բարեկամութիւն առնել ընդ միմեանս, երբեմն Ներսէսն գնար յՕտէսայ ի տեսութիւն վօրօնցովի և երբեմն նա գայր ի Քիւնի յատուկ ի տեսութիւն Ներսիսի: Այսպէս շարունակեաց Ներսէսն զվերատեսութիւն իւր մինչ ց1830 ամ. և այս միջոցին էր, որ թշնամիքն Ներսիսի Պասկեւիչն և իմարանքն յԷմիւրանայ, ընդգէժ խզիլ իւրեանց աշխատել են բոլոր ջանքեր ներգործութիւն իւրեանց (բայց գրութիւնն կը հօտնէ իւրեան ժամանակին վտան տագնայ), զի կարողանան զբոլոր մեծագործութիւնս նորա ոչնչացուցանել յառաջի կայսրն և յառաջի Հայոց ազգի: (Պասկեւիչն ամբաստանագրութիւնքն ունիմը հասցնել ձեզ) այժմ հարկաւոր է զգործս Էմիւրանայ միտաւորի գրել, որք ասուց գիտութեան հիմքով կաթով ցրեցին, նորա ստորագրութեամբ և իւրեանց ևս կողմանէ գրեալ էին իսկանդան զբարտանք և գանգատ գերեզմէ առ Պասկեւիչն, և Ներսէսն լսելով ի Քիւնի գայտանէ՛ գրեալ էր առ Շէֆն ժանդարմի Բեկիւնգորֆն. բայց աւագ, արգարութիւնն Ներսիսի մտացին անգոր և զրպարտիւք յառաջացան, ալ Բեկիւնգորֆն մինչ ցվերջն կենաց իւրոյ մնաց առ Ներսէսն անխախտ բարեկամ:

Շարունակութիւնն պիտի լինի թէ ինչ հնարքիւք ընտրեցին զՎիստնէս կարգեցին կաթով ցրելու և բոլոր գրութիւնք Ներսիսի, Պասկեւիչի և այլոց:

Ե. Օ. Գ

Ա. Մեծագործ Բ. ժանգրդ Ներսէսեան Ստանց ընկերութեան խառնել:

Գիւսան կը լիթայ ընդհանուր ժողովոյ վերջին նախն մէջ տրուած որոշ

ման համեմատ հրաւիրել զՄեծ. բաժանորդ: որ յառաջիկայ օրոտոս 3 կիւրակէ օրը առաւօտեան ժամը 3ին բարեհաճին ներկայանալ խառնելու Ս. Ներսիսեան վարժարանը, ուր պիտի գումարի ժողովոյ Զ. նիստը և վերջն իւր նստին մէջ արուած որոշմանց զէմ յոսան բաժանորդաց մասուցած բաղնիքն նկատման արդէն բացուած վիճարանութիւնը պիտի շարունակի:

Խառնելոյ	Գիւսան ընդհանուր
25 յուլիս 1875	Ժողովոյ
Պետեմպար	Ստեփանեան
Ն. Մ. Թէմուզ 1875	Ա. Անիւս Երեմի

Ե. Օ. Գ

Հայկաբանութեան ամեն ճիւղերուն և Տաճկերէնի հմուտ դաստառ մը պատրաստ է գասախօսել ազգային դպրոցաց կամ առանձին տաճկերու մէջ:

Ու զօղը լրացուց խմբագիր-Տնօրէնին հետ պէտք է խօսի:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԵՆԻՆԵՆԵՆ

ՀԵՂԵՆԱԿ
* * * ՍԵՐԱՑ
Թարգմանեց Մ. Մամբրեան
Հարգելի էր
Զմիւռնիա Տպարգ. Տէտէնան
Կը գտնուի Կ. Պոլսի Զագմաքը՝ Լար փողոց թիւ 20 Գաղափեան եղբայր գրատունը, եւ Զմիւռնիա Տէտէնանց վաճառատունը. ի գին 12 շրշ:

ՏՈՒՐԵՎԵԼԻՍԻՍԻՍ

Գ Ո Ր Ե Ն Ա Յ Ա Ն
Ոչխատասիրեալ
Արեւիկ Գ. Կոստանթնու
Բ. Տիմ

Զմիւռնիա Տպարգ. Տէտէնան
Կը գտնուի Կ. Պոլսի Զագմաքը՝ Լար փողոց Գաղափեան եղբայր գրատունը, եւ Զմիւռնիա Տէտէնանց վաճառատունը. ի գին 28 շրշ:

ՀՈՒՐԱՆ

ՇԱԽԱՐԵԱՅ
Գրեթէ 4-րդ տարւոյ Միւսնիսի
Վարդանանց և Դեմեքեանց վերայ թատերգութեան ձեւով գրուած գեղեցիկ գրութիւն մը, ամեն հարեանաւոր եւ կրօնասէր ազգայնոց ընթերցման արժանի: Գին 3 շրշ:

Ի Ա Ն

Խախտեալ վէ իսկիւն Գաբրիէլայի հիւանդանոցին իշուն մի պայտալ օրունաճ գոն 2500 գըլէ Պէնիկոյ Զիւրիսիս պէտքեր գըլէսի երեւ լին զրուշա օրարագ թալիպի էօտէսիտէ օրու թէմուզը բու մինին օթու գ պիւրիննի փէնճէնպիս կիւնը գարարը գաթիսի վիրիլնէ կիւնէն, ի թա թիւ մէկէ թալիպ օրարարը եհվմը մէկ քիւրաէ Տարը Շուրայի ասքէրիյէ կիւնէրի:

28 Թէմուզ 1875
Պապը Սէրասքէրի

Գալիան տողիդ տէկիրմէնիտէ սովորեալ ի գրէ մէկնուտ պոլուրան 50.000 գըլէ պէնիկոյ նիւմբո տողիգին էօմանը սիւ Մէմիսիյէ իկիւրի պիւրէր զրուշըք նիւմիյէ լա զինէսի սէրիլիս օրարագ արնմադ ի գրէ պէտքեր գըլէսի օթու գ պէշ փարայա թալիպի էօտէսիտէ օրու թէմուզը բու մինին օթու գ պիւրիննի փէնճէնպիս կիւնը գարարը գաթիսի վիրիլնէ կիւնէն, ի թա թիւ մէկէ թալիպ օրարարը եհվմը մէկ քիւրաէ Տարը Շուրայի ասքէրիյէ կիւնէրի:

Եհվմը մէկքիւրաէ Տարը Շուրայի ասքէրիյէ կիւնէրի:

28 Թէմուզ 1875
Պապը Սէրասքէրի

Պէյգօզ Գալէփախանէսի իշուն. Պաշըղ մըմար գըլէ 1900 պէտքեր գըլէսի 8 շրշ:

Պաշըղ մըմար գըլէ 1400 պէտքեր գըլէսի 26 շրշ:

Էօքէէ մըմար գըլէ 5000 պէտքեր գըլէսի 612 շրշ:

Վիտալը մըմար գըլէ 600 պէտքեր գըլէսի 8 շրշ:

Գուստուրա Գալիփօլը ասէտ 5100.000 պէտքեր պիւրի 612 շրշ:

Տէօրիւննի օրարարի հիւմայուն Գալէփախանէսի իշուն Տէր Սաաթէթ տէ թէմուզ օրունմադ իւրէ:

Գըլիսի իկիւրի գըլէ 750 պէտքեր գըլէսի 25 շրշ:

Սարա իկիւրի գըլէ 250 պէտքեր գըլէսի 50 շրշ:

Էօքէէ իկիւրի գըլէ 1650 պէտքեր գըլէսի 612 շրշ:

Գապարա չիկիսի գըլէ 1950 պէտքեր գըլէսի 8 շրշ:

Գուստուրա Գալիփօլը ասէտ 1.400.000 պէտքեր պիւրի 6 շրշ:

Մագարա իկիւրի 1000 ասէթ:

Գալէփախանէ անպարարը իշուն մի պայտալ օրունաճ օրան պարտէ Կահարէր օնպի գալէմ չիլի վէ սա իկիւրի ֆիլիթը մարագ ամէկէրի վէճ հիլէ թալիպի էօտէսիտէ օրու թէմուզը բու մինին օթու գըլէնը ճէհար չէնպիս կիւնը գարարը գաթիսի վիրիլնէ կիւնէն, ի թա թիւ մէկէ թալիպ օրարարը եհվմը մէկ քիւրաէ Տարը Շուրայի ասքէրիյէ կիւնէրի:

24 Թէմուզ 1875
Պապը Սէրասքէրի

Թուզը գուրու անատուր կէտի 25000 ասէթ, պէտքեր գըլէսի 15 շրշ:

Թուզը եաշլու մէկի կէտի 6000 ասէթ, պէտքեր գըլէսի 11 շրշ:

Թուզը գուրու թիֆլիզ կէտի 10000 ասէթ, պէտքեր գըլէսի 16 շրշ:

Բու զիւրա գուրու թմանէ ճիւրտ տի 5000 ասէթ, պէտքեր գըլէսի 35 շրշ:

Պէյգօզ տալիսիտէսիտէ լիւզուսի օրու պիւրաքատուր օնուրան պարտէ միւրագ ամէկէրի թալիպ լէրի էօտէսիտէ օրու պոլուրան թուզը գուրու անատուր կէտի իկիւրի թէմուզը բու մինին իկիւրի սէքիլնի փաղար իրթէսի վէ Թուզը եաշլու կէտի իկիւրի մահը մէկքիւրըն օթու գըլէնը ճէհար չէնպիս վէ Թուզը եաշլու բու մէկի կէտի իկիւրի մահը մէկքիւրըն փէնճէնպիս կիւնը գարարը գաթիսի վիրիլնէ կիւնէն, ի թա թիւ մէկէ թալիպ օրարարը եհվմը մէկ քիւրաէ Տարը Շուրայի ասքէրիյէ կիւնէրի:

Գալիան տողիդ տէկիրմէնիտէ սովորեալ ի գրէ մէկնուտ պոլուրան 50.000 գըլէ պէնիկոյ նիւմբո տողիգին էօմանը սիւ Մէմիսիյէ իկիւրի պիւրէր զրուշըք նիւմիյէ լա զինէսի սէրիլիս օրարագ արնմադ ի գրէ պէտքեր գըլէսի օթու գ պէշ փարայա թալիպի էօտէսիտէ օրու թէմուզը բու մինին օթու գ պիւրիննի փէնճէնպիս կիւնը գարարը գաթիսի վիրիլնէ կիւնէն, ի թա թիւ մէկէ թալիպ օրարարը եհվմը մէկ քիւրաէ Տարը Շուրայի ասքէրիյէ կիւնէրի:

22 Թէմուզ 1875
Պապը Սէրասքէրի

ՇԱՏ ԱՅԱՆ ԶՐԱՆՆԵՐ

Ա. Մ. Միտասեան և Ընկերք կը ծանուցանեն արդոյ հասարակութեան որ ձեռք բերին գանուած երեք հարիւրէն տեղի Ամբրիկայի պատուա

կան ջրհաններ լծէ նուազ եւ լծէ
շատ խորունկ հորերու յառկացեալ
աս ամառուան եղանակին բոլորն ալ
ծախելու համար շատ ածան պիտի
տան :

Խորունկ հորերու ջրհանն Անդղիոյ
ջրհաններուն նման գ. ժուարութիւններ
չունենալով շատ դիւրութեամբ կը
հաստատուի ու երկար ատեն չաւրը-
ւելով միշտ աղէկ ու գիւրաւ կը բա-
նի :

Ա. Մ. Մինասեան եւ ընկերաց
Ամերիկեան վաճառատուն
Ղալաթիա

ՇԱՏԱՆ ԱՃԱՆ ԳԱՐԵՈՒԱՆՆԵՐ

Ա. Մ. Մինասեան եւ ընկերաց կը
ծանուցանեն արդի հասարակութեան
որ ձեռքերին գտնուած չորս հա-
րիւրէն աւելի զանազան գեղեցիկ
քարեօղաններն աս ամառուան եղա-
նակին բոլորն ալ ծախելու համար սո-
վորական գիններէն շատ ածան պիտի
տան :

Ամերիկեան վաճառատուն
Ղալաթիա

26

ՏՈՒՐԻՍՏ Կ. ՓԱՓԱՋԱՆ

Իր բնակութիւնը հաստատած է
ի Ղալաթիա, Հայոց եկեղեցւոյ փողոց
թիւ 12 առեր, ուր պատրաստ է ա-
մեն օր մինչեւ կէսօր հիւանդ ընդու-
նիլ, եւ երեքշաբթի օրերն ալ ձրի
դարմանել :

Les annonces pour la France sont exclusive-
ment reçues à Paris, chez M. Orain, 9, Rue
Drouot, et les annonces pour l'Angleterre à
Londres, chez M. E. Micoud, 12 St.-Peter's
Steert Islington.

ԱՌ ԱՐԵԳԱԿՆ



ՄԵՆ ՏՈՒՆ ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ
ԵՒ ԴԵՂԱՐԵՅ
Վ. ԾԱՆՆԻ
ԲԵՐ՝ ՄԵՆ ԳԵՂԱՐԵՅ ԲԵՐ 77.

Կ. Պօլեւ Կառնաճի Գրառարար ԲԵՐ 1-2

Ամեն տեսակ գեղարարք եւ քի-
միական արտադրութիւնը խաղաղական
Անդղիական, Գաղղիական եւ Գերմա-
նական, նոյնպէս այլ եւ այլ արտադ-
րութիւնը խնամով պատրաստեալ ի
Պ. Վ. Ծաննի : Ամեն տեսակ հան-
քային շուրք, արտադրական ստույգ
ամեն ժամաւ մէջ, վիրաւորութեան
եւ մանկանց մարմինն ուղղելու գոր-
ծիք, Գառնաճի նիւթեր ու գործիներ,
Սօյֆալթի մեծ միջերը : Գիշերքան
ամեն ժամերուն մէջ գեղարարք ա-
րագ եւ ճիշդ պատրաստութիւն :

Միանգամայն Պորտիոյ Ռէնի, քի-
միական, Հոնգարիոյ եւ Թուրքիոյ
գիններուն մեծ միջերը : Բոնեաճ, ա-
մեն տեսակ ոգեւից ըմպելիք, անդա-
րար նիւթեր, անուշահոտութիւնք,
այլ եւ այլ տեսակ մազի ներկ, օրոյ
ամենէն ընտիրն ու փարձեալն է Տիւ-
բէնի շուրք, եւ այս ամենը խիստ չա-
փաւոր գինով :



ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՊՐՈՑ ՓԱՐԻՋԻ
Ա. Մ. Մ. Ծ. Ե. Դ. Մ. Դ. Մ.
Ե. ԿԻՏՅՈ

ԿՈՒՊՐ (ԳԱՐԵԱՆ) ԿԻՏՅՈ

ՀԵՂԱԿ ԹԱՆՁՐԱՅԵԱՆ



Պ. Անյո յաջողեցաւ Կուպրին անտանելի դառնու-
թիւնն ու կծուութիւնն անհետացնելու եւ խիստ դիւրա-
ւոր ընելու : Այս յաջող գիւտն օգուտ բաղեալ կուպրի
թանձր հեղուկ մը կը շինէ, որ փոքր քանակութեան մէջ
բազում ներդրութիւն սկզբունք կը պարունակէ : Ուստի Կիւ-
յոյ կուպրը՝ հասարակ կարգաւորին ամեն օգուտներն ունի
ստանց անպատեհութիւններն ունենալու : Բաւական է
ստորին գիւտ մը լցնել գաւաթ մը ջուրի մէջ, եւ գերա-
զանց կարգաւոր մը ձեռք կը բերուի անանց անխորժ հա-
մի : Այս կերպով ամեն մարդ կրնայ ինքնին կարգաւոր շի-
նել ալ տը եղած միջոցին, ուղածին շափ լիւթի եւ կամ զօ-
րաւոր, որով լի՜ ժամանակի խնայութիւն, եւ լի՜ փո-
խադրութեան դիւրութիւն կունենայ, եւ կուպրի անհա-
ճող գործածութեանն ալ ազատ կը մնայ :

Կիւյոյ կուպրը, հարուստի, թոքառաջից հիւանդու-
թեան (պրոնիթի), հոգի եւ այլ լանջային հիւանդութեանց
մէջ ուրիշ ամեն հեղուկ դեղերու անդէն օգտակարացի կը
բռնէ, համաճարակ հիւանդութեանց ժամանակ ալ քօլ-
ուայի, փոքրածուկեան, տենդի եւ ուրիշ այս տեսակ հի-
ւանդութեանց դէմ շատ օգտակար ըլլալը մասնաւորապէս
վիայուած է բժիշկներէն :

Վերջապէս մեծ յաջողութեամբ կը գործածուի
ԹՈՒՐԻՍՏԻ ԶԻՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ
ԹՈՒՐԻՍՏԻ
ՀԱՐՈՒԹԻՒ
ՀԱՅԻ
ԿՈՒՐԾԻՑ ԳՐԳՈՐԻԹԵԱՆ
ՓՈՂԻ ՀԻՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ
ՓԱՐԾՈՒՇՏԻ ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԴԵՄ :

Ամենին առաջ Պրիւսիի եւ յետոյ ամեն տեղ եղած
փորձերէ հաստատուած է որ կուպրը՝ թոքառաջից
հիւանդութեան օգուտը անհետացնելու խիստ օգտակար է :
Թոքառաջը չբժշկել, բայց հիւանդներուն մեծ սպաւառք եւ
հոնգստութիւն կուտայ : Դանձը հոգ եղնող հոգը կը
դադրեցնէ, եւ շատ անգամ հիւանդներուն կեանքը կեր-
կընդնէ : Այսչափը միայն բաւական է հիւանդաց ուղադ-
րութեան արժանի ընելու : Այս դեղը : Բայց պէտք է լաւ
համալուր : որ այս դեղը մանուսնը հիւանդութեան նոր
սկսած ժամանակը պէտք է գործածել : Թեթիւ հարուստ
մը կրնայ թոքառաջից հիւանդութեան փոխուիլ այս պատ-
ճառաւ, մէկը հոգով սկսելուն պէս այս դեղը պէտք է
ստանալ, որովս զի աւելի օգուտ քաղէ : Կուպրի տկարու-
թիւնն անհետացնելու շատերը կրծախոտ տնենալին չեն
կուտ ստոտողութեանը պահան-
դիւնը եւ շատ անգամ ինքզինքնին հարուստ կամ լիւթ եւ
լինէ :

Թոքառաջը ունեցած կը կարծեն երբոր թոքախոտ արդէն
սկսած է :

Փարիզի Եօթն հիւանդանոցաց, ինչպէս նաեւ Պրիւ-
սիի, Վիէնայի եւ Ղիպոնի մէջ Կիւյոյ կուպրով փորձեր
եղան եւ խիստ յաջող եղան :

Ահա ապիկ բժշկական Սթայրէլ լրագրին մէջ Տըթթոր
Ֆիլիպարձի ըրած դիտողութիւնները :

«Պրիւսիի մէջ Պ. Տ. . . 47 տարեկան, Եօթն տարիէ
ի վեր թոքառաջից հիւանդութեան ունենալով, վերջին
ծայր տկարացած էր : Գեղերէ ձանձրացած ըլլալով, մեծ
գիւտարութեամբ յանձն առաւ Կիւյոյ կուպրը փորձել,
Քիւնի մ'առաւ մէջ մարտադրական զօրութիւնն անթնցաւ,
հոգը քիչցաւ, եւ վեց շաբաթ դարմանէ ետեւ բոլորովին
դադրեցաւ : Երեք ամսն ալ հաստատեալ թժկեցաւ : Պ.
Տ. . . մինչեւ հիմա կը գործածէ այս դեղը, եւ երբեք
որ բնաւ չպիտի լիւթուի :

Գարձեալ :
«Պ. Չ. . . 45 տարեկան, չորս տարիէ ի վեր թոքախոտ
եղած էր, բերնէն յաճախ եւ անտարբեր եկած էր,
վերջապէս մահամերձ վիճակի մէջ էր : Կիւյոյ կուպրը առ-
ւել, եւ կարծես հրաշք գործեց հիւանդի վրայ : Տարիէն
աւելի է որ կը գործածէ, եւ հոգը դեմիլ բոլորովին դադ-
րած է : Չմի բեր որ այս դեղը Պ. Չ. . . ի թոքախոտը կա-
տարեալովս պիտի բժշկէ, բայց տարակոյտ չկայ որ անոր
կեանքը պիտի երկարեցնէ :

«Պէտք է աւելցնել, որ Կիւյոյ կուպրին գործածու-
թիւնը շատ պարագաներու մէջ ուրիշ բուսական տաք հե-
ղուկներ գործածելու հարկ չի ուղար :

Կիւյոյ կուպրին ամեն մէկ շիւր կրնայ տասներկու
լիտրի ջուր կարգաւոր լինել :

Ա. Չ. Դ.

Կիւյոյ կուպրին շատ ծախուի որ իր օգտակար յառ-
կութեանց ազապցց մ'է, բաւ չափի նմանողութեանց եւ
խաղախեալ լազաղութեանց առիթ տուած է, ինչպէս
որ բազմաթիւ ճարտար քիմիագործներու քննութիւններէն
հասկցուած է :
Չուղերով բարոյական պատասխանատուութիւն մը վը-
րտա բերել, որ ինձ չվերաբերի, կը յայտնեմ թէ ես մի
միայն իմ շինած բազաղութեան հարազատութեանն ու
լաւութիւնը կ'երաշխաւորեմ : Ուստի զնոյնները պէտք է որ
չլինի վրայի կանանց պիտակին եւ անոր պարանոցին փաթ-
թեալով երկրին վրայ հետեւ :
Թեւեթ քիմիական փորձերը կ'ընեն անոտողութեանը պահան-
դին :

Handwritten signature or mark.

Կը դանուի Բէրա եւ Կ. Պօլիս Գանդիւք եղբարց,
վէրիցի եւ Կասապեանի գեղարարները :

Այս լրագրը շաբաթը երեք անգամ
կը հրատարակուի, երեքշաբթի, հինգշաբ-
թի եւ շաբաթ օրերը : Բաժանորդագրու-
թեան տեղերն են Կ. Պօլիս Գանդիւք իւսն
վերի լազրի թիւ 45 Կասապի խմբագրատուն
Խաղաղատեղ մէջ հետեւեալ հոգա-
րարձուաց անեմակները :
ԻՋՄԻՐ. Խաչիւն ապա Տէալեան,
ՆԻՒՄԻՐԻԱ. Խոտրով Է. Ֆ. Խալիճեան,
ՊԵՐԻՍ. Ստեփան ապա թանկերեան,
ԹԵԲԵՐԵՍՎ. Քոփակիւ ապա Ռ. Գուհ-
արեան :
ՏՐԱՊԵՐՈՆ. Խաչատուր ապա Լ. Մանու-
կԱՐԻՆ. Կարապետ ապա Մանուկի Զա-
քարեան :
ՎԱՆ. Կարապետ ապա Ն. Թաթեան,
ՄՈՒՆ. Միքայիլ ապա Փօթիկեան
ԵԱՇ. Մ. ապա Խաչիկեան :
ՅՈՒՐԵՍ. Ֆէրհադ ապա Ս. Ֆէրհադեան
ԵՐԶՐԱՅ. Թաղեալ ապա Բաղդա-
տեան :
ՍԻՎԵՐԵՆԻԱՐ. Արթ. Տ. Ռուբէն,
Երբէ խաղաղներէ ստորագրուի ու-
ղղներն առ տեղերէն մէկուն հետ երեսն
թղթի ակցիլ :

ԽՈՒՐԱԳՐՈՐ՝ ՏԵՂԱԿ
Կ. Ս. ԿՈՒՐԾՈՒԹԵԱՆ
ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼԵՂԱՐԱՐ
Կ. ՊՈՒՆ ԶԻՆԱԳՐՈՒԹԵԱՆ

**NORTH BRITISH AND
MERCANTILE
INSURANCE COMPANY**

ԿՈՐԹՅ ՊԻԹԻՇ ԵՆՏ ՄԵՐԿԵՆԹԻՆ
Հանրայն Եւ Կոմերցիոն Եւրոպեան
Ընկերութիւն Անգլ. Լը.

Բաժանորդագրեալ գումար լուր 2,000,000
վճարեալ գումար լուր 250,000
Պահեստի գումար հրդեհ-
հի ճիւղին գումար 596,000—846,000
1872ին հրդեհի գումար 794,000

Ստորագրեալ իրենց բազմաթիւ յաճախողները
հաստատութեան կը ծանուցանեն որ իրենց վերաբերեալ երկու
թղթերով գործակալար ընտրուած ըլլալով, այնպիսի գումար
որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ դիւրութիւններ կը
մատուցանեն :
Ապահովութեան կարգաւորութիւնները կը բաղկանան երկու
ժ ձեռնարկով ընկերութեան ալ կրնայ աւելի մեծագումար
ապահովութեան լաւագործ-
ներու ինքզինքն երկարացուանել :
Գրեթէ ամեն կարգի վտանգաւոր ապահովութեան կրնան
ընդունուիլ ինչպէս բերքի Ղալաթիոյ եւ Պօլիս մէջ, նոյնպէս
մատուցաւ քաղաքները գիւղերը եւ դա-
տները :
Գիններն եւ աւելի մանրամասն տեղեկութեանց
համար պէտք է դիմել Մի-
ացեալ ընկերութեանց գրասենեակը Ղալաթիոյ
Բէրլեմէ բաղարի մօտ Պալատի
Խոտ Թիւ 8 :
Վ. Ռ. ՍՈՒՍԵ

**NORTHERN
ASSURANCE COMPANY**

ԿՈՐԹՅԸՐԵ
Հանրայն Եւ Կոմերցիոն Եւրոպեան
Ընկերութիւն Անգլ. Լը.

Բաժանորդագրեալ գումար լուր 2,000,000
վճարեալ գումար լուր 100,000
Պահեստի գումար հրդեհ-
հի ճիւղին գումար 250,000—550,000
1872ին հրդեհի գումար 270,000

Ստորագրեալ իրենց բազմաթիւ յաճախողները
հաստատութեան կը ծանուցանեն որ իրենց վերաբերեալ երկու
թղթերով գործակալար ընտրուած ըլլալով, այնպիսի գումար
որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ դիւրութիւններ կը
մատուցանեն :
Ապահովութեան կարգաւորութիւնները կը բաղկանան երկու
ժ ձեռնարկով ընկերութեան ալ կրնայ աւելի մեծագումար
ապահովութեան լաւագործ-
ներու ինքզինքն երկարացուանել :
Գրեթէ ամեն կարգի վտանգաւոր ապահովութեան կրնան
ընդունուիլ ինչպէս բերքի Ղալաթիոյ եւ Պօլիս մէջ, նոյնպէս
մատուցաւ քաղաքները գիւղերը եւ դա-
տները :
Գիններն եւ աւելի մանրամասն տեղեկութեանց
համար պէտք է դիմել Մի-
ացեալ ընկերութեանց գրասենեակը Ղալաթիոյ
Բէրլեմէ բաղարի մօտ Պալատի
Խոտ Թիւ 8 :
Վ. Ռ. ՍՈՒՍԵ